# ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ՝ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N33 «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/11»

Գ.Արմաշ «26» 04 2018թ.

« Ակադեմիկոս Ա.Պ.Հայրիյանի անվ.Արմաշի առողջության կոնտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս **տնօրեն** Լև ոն Հայրիյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Գնորդ**, մի կողմից և <<ՖՈՏՈՆ>> ՍՊԸ - ի դեմս Ընկերության տնօրեն Ն.Պետրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Վաճառող**, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **3** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **3** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում **է1879760.0(մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունինը հազար յոթհարյուր վաթսուն)**ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

______________________

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[4]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[5]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| << Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն>>ՓԲԸ | << ՖՈՏՈՆ >> ՍՊԸ |
| ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | ԼՂՀ ք. Ստեփանակերտ Վ.Սարգսյանի փող. 14շ.21բն. |
| Փ. Մ. Նիկողոսյան 12 | ,,ՎՏԲ Հայաստան Բանկ,, ՓԲԸ |
| ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ Արարատի մ/ճ | Հ/ Հ 16044050085000 |
| Հ/Հ 11500604222600 | ՀՎՀՀ 90036001 |
| ՀՎՀՀ 04101356 | |
| Տնօրեն՝ Լ. Հայրիյան | Տնօրեն՝ Ն.Պետրոսյան |
| | Կ.Տ |

Հավելվ
« 26.04 . 2018 թ. կնքվա
N 33 «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 15311100 | Կարտոֆիլ | ՀՀ | Միջին չափի,վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, չծլած առանց վնասվածքների,կեղևը ամբողջական չըվնասված, կլոր ձվաձև 6-ից 7 սմ, 50%, երկարացված 6-ից 6,5 սմ 50%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8- րդ հոդվածի: | կգ | 148.0 | 962000 | 6500 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 6500 | 2-րդ, 3-րդ և 4-րդ. եռամսյակներում բայց ոչ ուշ քան մինչև 15.12.2018թ. |
| 2 | 03221410 | Կաղամբ | ՀՀ | (ԳՕՍՏ 26768-85) վաղահաս և միջահաս, արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց | կգ | 94.0 | 188000.0 | 2000 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 2000 | 2-րդ, 3-րդ և 4-րդ. եռամսյակներում բայց ոչ ուշ քան մինչև 15.12.2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս – 1.0 կգ | | | | | | | |
| 3 | 15331139 | Լոլիկ | ՀՀ | Լոլիկ թարմ,հասունացած կարմիր գույնի,չվնասված, ամուր առանց խոցերի ,հյութալի և քաղցրահամ: 6-ից 7 սմ, 50%, տրամագիծը 7-ից 8 սմ 50% օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակայի և կանոնների և նորմերի և Սննդամթերքի անվտանգության մասին՝ ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 100.0 | 120000.0 | 1200 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 1200 | 01.08.2018 թ. - 01.11.2018թ. |
| 4 | 03221115 | կանաչ լոբի | ՀՀ | Սովարական կանաչ գույնի,դալար-մատղաշ չվնասված, ԳՕՍՏ 26767-85: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 250.0 | 50000.0 | 200 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 200 | 01.06-01.07.2018թ. և 01.10-01.11.2018թ. |
| 5 | 03221100 | բազուկ | ՀՀ | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց | կգ | | | 200 | ՀՀ Արարատի մարզ գ. | 200 | 2-րդ, 3-րդ և 4-րդ. եռամսյակն |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների:Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների:Արմատապտուղն երի չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%: | | 174.0 | 34800.0 | | Արմաշ | | եր[illegible] ոչ ուշ ք[illegible] մինչև 15.12.2018թ |
| 6 | 03221110 | գազար | ՀՀ | Սովարական և ընտիր տեսակի: Արտաքին տեսքը՝ արմատապտուղները լվացված թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: 10-ից 12 սմ, 50%, երկարությամբ 12-ից 15սմ և ավել 50% Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 214.0 | 42800.0 | 200 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 200 | 2-րդ, 3-րդ և 4-րդ. եռամսյակն երում բայց ոչ ուշ քան մինչև 15.12.2018թ |
| 7 | 15331161 | սոխ գլուխ | ՀՀ | Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, միջին մասի տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, | կգ | | | 470 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 470 | 2-րդ, 3-րդ և 4-րդ. եռամսյակն երում բայց |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ամբողջական, առանց հիվանդությունների, չոր չծլած, , առանց ճաքերի և վնասվածքների: ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | | 228.0 | 107160.0 | | | | ոչ [illegible] մինչ[illegible] 15.12.2018թ |
| 8 | 15331136 | բիբար | ՀՀ | Բիբար թարմ,հասունացած կանաչ ,քաղցր երկարությունը 10սմ ոչ պակաս օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 150.0 | 75000.0 | 500 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 500 | 01.08.2018 թ.- 01.11.2018թ. |
| 9 | 15331168 | սմբուկ, | ՀՀ | Սմբուկ թարմ, սևագույն ,մատղաշ ,չսերմակալված երկարությունը 15սմ ոչ պակաս, չվնասված Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9- րդ հոդվածի | կգ | 100.0 | 50000.0 | 500 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 500 | 01.08.2018 թ.- 01.11.2018թ. |
| 10 | 03221124 | վարունգ | ՀՀ | Վարունգ թարմ, կանաչ ,մատղաշ ,չսերմակալված երկարությունը 10-15սմ, առողջ, չվնասված : օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) | կգ | | | 2500 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | 2500 | 01.06.2018 թ.- 01.11.2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | | 100.0 | 250000.0 | | | | |

Ծանոթություն.
1.Չափաբաժին N1 15311100 **Կարտոֆիլ**` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը երեք անգամ 250-270կգ յուրաքանչյուր տասնօրյակի համար
2.Չափաբաժին N2 03221410 **Կաղամբ** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը երեք անգամ 80-85կգ յուրաքանչյուր տասնօրյակի համար
3.Չափաբաժին N3 15331139 **Լոլիկ** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը չորս անգամ 80-90կգ յուրաքանչյուր շաբաթվա համար
4.Չափաբաժին N4 03221115 **կանաչ լոբի** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը չորս անգամ 20-25կգ յուրաքանչյուր շաբաթվա համար
5.Չափաբաժին N5 03221100 **բազուկ** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը երկու անգամ 10-15կգ յուրաքանչյուր մատակարարման ժամանակ
6.Չափաբաժին N6 03221110 **գազար** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը երկու անգամ 10-15կգ յուրաքանչյուր մատակարարման ժամանակ
7.Չափաբաժին N7 15331161 **սոխ գլուխ** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը երկու անգամ 25-30 կգ յուրաքանչյուր մատակարարման ժամանակ
8.Չափաբաժին N8 15331136 **բիբար** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը չորս անգամ 40կգ յուրաքանչյուր շաբաթվա համար
9.Չափաբաժին N9 15331168 **սմբուկ** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը չորս անգամ 40կգ յուրաքանչյուր շաբաթվա համար
10.Չափաբաժին N10 03221124 **վարունգ** ` մատակարարումը անհրաժեշտ է իրականացնել , տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում նշված մատակարարման Ժամկետներում ,ամիսը չորս անգամ 110-125կգ յուրաքանչյուր շաբաթվա համար

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| << Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն>>ՓԲԸ | << ՖՈՏՈՆ >> ՍՊԸ |
| ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | ԼՂՀ ք. Ստեփանակերտ Վ.Սարգսյանի փող. 14շ.21բն. |
| Փ. Մ. Նիկողոսյան 12 | ,,ՎՏԲ Հայաստան Բանկ,, ՓԲԸ |
| ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ Արարատի մ/ճ | Հ/ Հ 16044050085000 |
| Հ/Հ 11500604222600 | ՀՎՀՀ 90036001 |
| ՀՎՀՀ 04101356 | |
| Տնօրեն` Լ. Հայրիյան | Տնօրեն` Ն.Պետրոսյան |
| | Կ.Տ |

Հավելված 3
N 33 ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/11 ծածկագրով
26.04.2018թ. գնանշման հարցման կնքված

**«ՖՈՏՈՆ» ՍՊԸ**

## Գնման ժամանակացույց

| ՀՀ | Գնման ենթակա ապրանքների անվանումները | Չափի միավոր | Միա-վորի գինը | Ըստ ամիսների գնման ենթակա քանակները 2018թ. | | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմ | հոկտեմբ | նոյեմբ | դեկտեմբ | քանակը |
| 1 | 2 | 3 | | 4 | | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 1 | Կարտոֆիլ | Կգ | 148,0 | | | | | 810 | 810 | 810 | 810 | 810 | 810 | 810 | 830 | 6500 |
| 2 | Կաղամբ | կգ | 94,0 | | | | | 250 | 250 | 250 | 250 | 250 | 250 | 250 | 250 | 2000 |
| 3 | Ղոլիկ | կգ | 100,0 | | | | | | | | 400 | 400 | 400 | | | 1200 |
| 4 | կանաչ լոբի | կգ | 250,0 | | | | | | 80,0 | | | 40,0 | 80,0 | | | 200 |
| 5 | բազուկ | կգ | 174,0 | | | | | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 200 |
| 6 | գազար | կգ | 214,0 | | | | | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 200 |
| 7 | սոխ գլուխ | կգ | 228,0 | | | | | 55 | 55 | 55 | 55 | 55 | 55 | 55 | 85 | 470 |
| 8 | բիբար | կգ | 150,0 | | | | | | | | 165 | 165 | 170 | | | 500 |
| 9 | սմբուկ, | կգ | 100,0 | | | | | | | | 165 | 165 | 170 | | | 500 |
| 10 | վարունգ | կգ | 100,0 | | | | | | | 625 | 625 | 625 | 625 | | | 2500 |
| | | | | | | | | | | | | | | | | |

**Գնորդ՝**
,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Արմաշ
,,ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ,, ՓԲԸ Արարատի մ/ճ
Հ/Հ 11500604222600
ՀՎՀՀ 04101356
Տնօրեն……………………………Լ. Հայրիյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Վաճառող՝**
<< ՖՈՏՈՆ >> ՍՊԸ
ԼՂՀ ք. Ստեփանակերտ Վ.Սարգսյանի փող. 14շ.21բն.
,,ՎՏԲ Հայաստան Բանկ,, ՓԲԸ
Հ/ Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001
Տնօրեն՝ Ն. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/11 ծածկագրով կնքված N33
26.04.2018թ գնանշման հարցման պայմանագրի

*«ՖՈՏՈՆ» ՍՊԸ*

## Վճարման ժամանակացույց

| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդ գումար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | ,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ | | | | | | 165620 | 351240 | 559360 | 988610 | 1477600 | 1988720 | 1159340 | 1334760 | 1879760,0 |
| 1 | 15311100 | Կարտոֆիլ | | | | | 119880 | 239760 | 359640 | 599400 | 599400 | 719280 | 839160 | 962000 | 962000,0 |
| 2 | 3221410 | Կաղամբ | | | | | 23500 | 47000 | 70500 | 94000 | 117500 | 141000 | 164500 | 188000 | 188000,0 |
| 3 | 15331139 | Լոլիկ | | | | | | 0 | 0 | 40000 | 80000 | 120000 | 0 | 0 | 120000,0 |
| 4 | 3221115 | կանաչ լոբի | | | | | | 20000 | 0 | 0 | 300000 | 500000 | 0 | 0 | 50000,0 |
| 5 | 3221100 | բազուկ | | | | | 4350 | 8700 | 13050 | 17400 | 21750 | 26100 | 30450 | 34800 | 34800,0 |
| 6 | 3221110 | գազար | | | | | 5350 | 10700 | 16050 | 21400 | 26750 | 32100 | 37450 | 42800 | 42800,0 |
| 7 | 15331161 | սոխ գլուխ | | | | | 12540 | 25080 | 37620 | 50160 | 62700 | 75240 | 87780 | 107160 | 107160,0 |
| 8 | 15331136 | բիբար | | | | | | 0 | 0 | 24750 | 49500 | 75000 | 0 | 0 | 75000,0 |
| 9 | 15331168 | սմբուկ, | | | | | | 0 | 0 | 16500 | 33000 | 50000 | 0 | 0 | 50000,0 |
| 10 | 3221124 | վարունգ | | | | | | 0 | 62500 | 125000 | 187000 | 250000 | 0 | 0 | 250000,0 |

**Գնորդ՝**

*ՀՀ Արարատի մարզ, գ. Արմաշ*
*,,ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ,, ՓԲԸ Արարատի մ/ճ*

*Հ/Հ 11500604222600*
*ՀՎՀՀ 04101356*
*Տնօրեն......................L. Հայրիյան*
*(ստորագրություն)*
*Կ.Տ.*

**Վաճառող՝**

*<< ՖՈՏՈՆ >> ՍՊԸ*
*ԼՂՀ ք. Ստեփանակերտ Վ.Սարգսյանի փող. 14շ.21բն.*
*,,ՎՏԲ Հայաստան Բանկ,, ՓԲԸ*
*Հ/ Հ 16044050085000*
*ՀՎՀՀ 90036001*
*Տնօրեն՝ Ն.Պետրոսյան*
*(ստորագրություն)*
*Կ.Տ.*

Հավելված 8

*Հավելված 10*
*«ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով*
*գնանշման հարցման պայմանագրի*

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «26» ապրիլի 2018 թ.**

<<ՖՈՏՈՆ>>ՍՊԸ-Ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Պետրոսյանի , (անձն. AH0560164, տրված 10.06.2008թ. 070-ի կողմից ), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. *Համաձայնության առարկան*

1.1 Ընկերությունը մասնակցում է <<Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն>> ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /15/12/2018 ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

<u><<Ֆոտոն>> ՍՊԸ</u>

ընկերության անվանումը

<u>ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի փող., 14 շ., 21 բն.</u>

ընկերության հասցեն

<u>«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ</u>

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

<u>16044050085000</u>

ընկերության բանկային հաշվեհամարը

<u>90036001</u>

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

<u>՝ Ն. Պետրոսյան</u>

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ** [6]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ <u><<Ֆոտոն>> ՍՊԸ</u>

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ «ՎՏԲ Հայաստանբանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ <u>16044050085000</u>

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 90036001

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **<< Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն >> ՓԲԸ**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 04101356

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 11500604222600

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 187976 / հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր յոթանասունվեց/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ (պայմանագրի կատարման ապահովման համար)

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **N33 «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/11»**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| 22.ա. Շահառուի ստորագրությունները | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝ |
|---|---|
| /____________________/ | /____________________/ |
| /____________________/ | /____________________/ |
| 22.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |

"ՖՈՏՈՆ" "ФОТОН" "FOTON" 90036001

---

6 Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

| | |
|---|---|
| ...ա. Շահառուին սպասարկող ֆինանսական ...կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>24.բ. Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>23.բ. Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |